

**ԴՌՆԲԱՑԷՔ**

Յատկանշական է, որ Ծաղկագար- դի երեկոյեան կը կատարուի Դոնբացե- ֆի հրաշալի արարողութիւնը, ուրտեղ շեշտը հիմնականին մէջ դրուած է այն մտքին վրայ, որ Աստուած Արքայութե- նէն ներս մուտքը վերապահուած է միայն արդարներուն: Անհրաժեշտ է այստեղ մեջքերել Դոնբացեֆի արար- ղութեան մէջ ներառուած երկխօսու- քիւնը, որն այնքան ներշնչող է եւ հո- գեմորոգող: Այս երկխօսութիւնը մեկ- նաբանելու անհրաժեշտութիւնը չենք գգար:

Դոնբացեֆի երկխօսութիւնը. Բաց մեզ Տէր գոռոն ողորմութեան, որ ող- բալով կարդամ առ ինչ (կ'ըսուի երեք անգամ):

**Ներսէն կ'ըսուի.** Ո՛վ եմ ասոնք, որ բանամ դուրը, որովհետեւ այս դուրը Տիրոջն է եւ արդարները կը մտնեն ան- կէ:

**Քահանան Դուրսէն կ'ըսէ.** Ոչ միայն արդարները կը մտնեն, այլեւ մեղաւորներ՝ խոստովանութեամբ եւ ապաշխարութեամբ:

**Ներսէն.** Որովհետեւ ասիկա դուռն է երկինքի եւ հովիտը տրտմութեան. գոր Աստուած Յակոբին ուխտեց. ար- դարներուն հանգստարան, մեղաւորնե- րուն ֆարարան, Քրիստոսի արքայա- կան, հրեշտակներու բնակարան, սուր- բերու ժողովարան, ապաւենի ֆաղաֆ եւ տուն Աստուծոյ: Ապա կը շարունակուի երկխօսութիւնը մինչեւ Ներսէն ըսուի. Արարիչ Աստուծոյ ձայնը կը կոչէ ըսե- լով. «Եկէ՛ք Հօրս օրհնածներ եւ ժառան- գեցէ՛ք աշխարհի սկիզբէն ձեզի պատ- րաստուած արքայութիւնը»:

**Քահանան կ'ըսէ.** Բացէ՛ք ինձի ողորմութեան դուրը, որպէսզի անկէ մտնեմ եւ Տիրոջ խոստովանիմ: **Ապա Վարագոյրը կը բացուի:**

**ԵՐԲ ԱՍՏՈՒԾՈՅ  
ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՓՆՏՈՒՄ  
ՄԻԱՍՆԱԲԱՐ ԿԱՐԴԱՆՔ**

Սաղմոս 5

Ո՛վ Տէ՛ր, լսէ ինչ որ կ'ըսեմ, նկատի՛ առ հեծեծամեմերս:

Մտիկ ըրէ աղօթքս, ո՛վ իմ Թագա- ւորս եւ Աստուածս, կ'աղաչեմ քեզի:

Ո՛վ Տէ՛ր, առտու կանուխէն լսէ՛ կան- չըս եւ սպասեմ պատասխանիդ:

Դուն անօրէնութիւն չես սիրեր, ո՛վ Աստուած դուն չես կրնար չարիքին հետ հաշտուիլ. հպարտները չես հանդուր- ժեր եւ կ'ատես անօրէնութիւն գործող- ները սուտ խօսողները կորուստի կը մատնես, արիւնահեղ ու նենգաւոր մարդէն կը գզուիս, ով Տէր: Բայց ես ֆու անչափ սիրոյդ ապաւինած՝ ֆու տունդ պիտի մտնեմ, երկիւղածութեամբ դէպի սուրբ տանադ պիտի դառնամ ու երկրպագեմ:

Տէ՛ր, արդարութեամբդ առաջնորդէ զիս, ֆու ցամբադ հարթէ՛ իմ դիմացս, որպէսզի դարձամուտ թշնամիներս տեսնեմ, որովհետեւ անոնց բերանը ս- տութեամբ լի է, եւ անոնց սիրտը՝ չա- րութեամբ լեցուն. բացուած գերեզման է կոկորդն անոնց եւ նենգութեան գոր- ծիք դարձեր են լեզուներն անոնց:

ՇԱՐՈՒՆԱԿԵՆ ԼՍԱՂՄՈՍԱԳԻՐՔԷՆ

Միրելի ընթերցող, ՃՐԱԳ թերթը ամէն Կիրակի կը բաժնուի մեր ժողովուրդին, եկեղեցիներու բանկային մօտ: Նաեւ՝ Facebook-ի վրայ փնտռել «Jerak կամ ՃՐԱԳ», ապա սեղմել «Like»-ը, կար- դալու կամ անդամագրուելու համար:

**ՀԱՍՏԷ.**

ՃՐԱԳ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ - Bourj-Hammoud, P.O.Box 80810 -Tel/Fax:01-258300- facebook-ի էջ jerak ճրագ թերթ



ԶՈՒ ԽՕՍԲԴ ԽՍ ՈՏԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՍ ՇԱԽՂՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս, 119-105)

ԺԳ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 5 ԱՊՐԻԼ 2020

ԹԻԻ 14

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

Երգ. 1.1-2.3: Ջք. 9.9-15: Փիսյ. 4.4-7

ՅԻՍՈՒՄ ԶՐԻՍՏՈՍԻ ԱԲԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍ 20.29-21.17

**ԾԱՂԿԱԶԱՐԴ**

Երբ Յիսուս եւ իր աշակերտները Երիքովէն դուրս կ'ելլէին, մեծ բազմութիւն մը հետեւեցաւ իրենց: Դամբու եզերքին նստած երկու կոյրեր, երբ լսեցին որ Յիսուս կ'անցնի, սկսան աղաղակել. «Ողորմէ՛ մեզի, Յիսուս, Դաւիթի որդի»: Ժողովուրդը սաստեց անոնց որպէսզի լռեն, բայց անոնք աւելի բարձր ձայնով շարունակեցին աղաղակել. «Ողորմէ՛ մեզի, Տէ՛ր, Դաւիթի որդի»: Յիսուս կանգ առաւ, իր մօտ կանչեց կոյրերը եւ հարցուց. «Ի՞նչ կ'ուզէք, որ ընեմ ձեզի»: Անոնք պատասխանեցին. «Տէ՛ր, թող մեր աչքերը բացուին»: Յիսուս գրաց եւ անոնց աչքերուն դպաւ: Կոյրերը անմիջապէս սկսան տեսնել եւ հետեւեցան իրենց:

Երբ Երուսաղէմի մօտեցան եւ հասան Բեթփազէ՝ Զիթենեաց լեռան կողին, Յիսուս իր աշակերտներէն երկուքը որկեց՝ անոնց պատուիրելով. «Գացէ՛ք սա դիմացի գիւղը եւ անմիջապէս հոն կապուած է՛ք մը պիտի գտնէք իր աւանակին հետ. քակեցէ՛ք եւ ինձի բերէ՛ք: Եթէ մէկը առարկէ, ըսէ՛ք. "Տէրը անոնց պէտք ունի", եւ անմիջապէս թող պիտի տայ ձեզի»: Ասիկա պատահեցաւ, որպէսզի իրականանայ մարգարէին խօսքը. «Երուսաղէմի ըսէ՛ք. Ահա քու թագաւորդ քեզի կու գայ. Անիկա հեզ է, նստած իշու մը աւանակին վրայ»: Աշակերտները գացին եւ կատարեցին, ինչ որ Յիսուս պատուիրեց իրենց: Բերին էլն ու աւանակը եւ իրենց հագուստները անոնց վրայ դրին: Ապա Յիսուս նստաւ աւանակին վրայ: Ժողովուրդէն շատեր իրենց հագուստները կը փռէին ճամբուն վրայ, ուրիշներ ծառերէն ստեր կը կտրէին եւ կը տարածէին ճամբուն վրայ: Եւ ամբողջ բազմութիւնը, որ թափօրին մէջ Յիսուսի առջեւէն կ'երթար կամ կը հետեւէր իրեն, կ'աղաղակէր. «Օրհնութի՛ւն Դաւիթի որդիին, օրհնեալ է ան որ կու գայ Տիրոջ անունով: Օրհնութի՛ւն Բարձրեալին»:

Երբ Յիսուս Երուսաղէմ մտաւ, ամբողջ քաղաքը դողդեցաւ: «Ո՞վ է ասիկա», կը հարցնէին քաղաքի բնակիչները. եւ ամբողջ կը պատասխանէր. «Ասիկա Յիսուս մարգարէն է, Գալիլիայի Նազարէթ քաղաքէն»:

Ապա Յիսուս տաճար մտաւ եւ դուրս վռնտեց բոլոր անոնք որոնք տաճարին մէջ առուծախ կ'ընէին. լուսնափոխներուն սեղանները եւ աղանեղաճառներուն աթոռները շրջեց եւ ըսաւ անոնց. «Սուրբ Գիրքերուն մէջ գրուած է. "Իմ տունս աղօթքի տուն պիտի կոչուի", մինչ որք զայն աւազակներու որջի վերածած էք»: Տաճարին մէջ Յիսուսի մօտեցան կոյրեր եւ կաղեր եւ ան բժշկեց զանոնք: Երբ քահանայապետներն ու դպիրները տեսան Յիսուսի կատարած հրաշքերը եւ լսեցին աղաղակը մանուկներուն, որոնք տաճարին մէջ կը գոչէին. «Օրհնութի՛ւն Դաւիթի որդիին», բարկացան եւ Յիսուսի ըսին. «Կը լսե՞ս, ինչ կ'ըսեն անոնք»: Յիսուս պատասխանեց. «Այո՛, չէ՞ք կարդացած Սուրբ Գիրքին սա խօսքը, թէ "Մանուկներու եւ կաթնկեր երեխաներու բերնով գովեստ հիւսեցիր"»: Ապա Յիսուս ձգեց զանոնք եւ քաղաքէն դուրս ելաւ՝ դէպի Բեթանիա, եւ հոն գիշերեց:

**ԶԱՔԱՐԻԱ ՍԱՐԳԱՐԷԻ ԳԻՐՔԵՆ  
9.9-17**

Մեծապես ուրախացի՛ր, Սիոնի՛ բնակիչ, ցնծութեամբ աղաղակե՛, բնակի՛չ Երուսաղեմի՛. ահա թագաւորդ ֆեզի կու գայ արդարութիւն եւ փրկութիւն բերելու. որպէս հեգուծեան նշան՝ նստած իշու վրայ, դեռ մատղաշ աւանակի վրայ:

Անիկա Եփրեմի երկրէն պիտի անհետացնէ պատերազմի կառքերը, Երուսաղեմէն պիտի վերացնէ պատերազմի ձիերը. պատերազմի աղեղը պիտի խորտակէ եւ խաղաղութիւն պիտի յայտարարէ ժողովուրդներուն: Անիկա իր իշխանութիւնը պիտի տարածէ ծովէ ծով, Եփրատ գետէն սկսեալ մինչեւ ծայրերն աշխարհի:

Գալով ֆեզի, Տէրը այսպէս կ'ըսէ. «Քանի արիւնով ուխտ կնքեցի հետդ, գերեվարուած քու եղբայրներդ պիտի ազատեմ անջրդի անապատին խորերէն:

Երուսաղեմ վերադարձե՛ք, ո՛վ գերիներ, որ յոյսով կը սպասէք, ահա կը յայտարարեմ թէ ձեր ախորի ժամանակաւոր գրկանքներուն փոխարէն կրկնապատիկ բարիքներով պիտի հատուցանեմ ձեզի:

Ինձի համար Յուդան պիտի լարեմ աղեղի պէս, իսկ Եփրեմը՝ նետի պէս. գաւակներդ հեթանոսներուն դէմ պիտի հանեմ, ո՛վ Սիոն, եւ ֆեզ ձեռքիս մէջ պիտի բռնեմ պատերազմիկ զինուորի պողպատեայ սուրին նման»:

Այո՛, Տէրը ինք վերակացու պիտի ըլլայ անոնց վրայ. անոր նետը փայլակի պէս պիտի հարուածէ: Տէրը, Ամենակալ Աստուածը փող պիտի հնչեցրնէ եւ թշնամիներուն դէմ պիտի ֆալէ՛ մրրիկի պէս սպառնալից:

**Շարունակել ընթերցել Աստուածաշունչէն**



**ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՆՃԱՄԱԿ  
ՓԻԼԻՊՊԵՑԻՆԵՐՈՒՆ  
4.4-7**

Միշտ ուրախ եղէ՛ք Աստուծո՛ւմ. դարձեալ կ'ըսեմ՝ ուրախ եղէ՛ք: Բոլորին հանդէպ հեզ եւ ազնիւ եղէ՛ք: Շուտով Տէրը կու գայ: Ոեւէ բան թող չմտահոգե՛ ձեզ. այլ միշտ ձեր աղօթքներուն եւ աղաչանքներուն մէջ գոհու՛նալ սրտով Աստուծո՛ւմէ խնդրեցէ՛ք ինչ բանի որ կարիքը կը գգաք, եւ այն ատեն Աստուծոյ խաղաղութիւնը, որ միտքով կարելի չէ հասկնալ, խաղաղ պիտի պահէ ձեր սիրտերն ու միտքերը՝ որոնք Քրիստոս Յիսուսի միացած են:

**Ա.ՂՕԹԷ**

Փրկէ՛ զիս, Տէ՛ր, մարդկային գովեստէն, փառքէն ու մեծարանքէն, [որովհետեւ] զիս խաւարս, լոյս կարծելով՝ բարին կը համբաւեն. եղկելիս՝ երանելի եւ ողորմելիս առաքինի կը հռչակեն, մինչդեռ ողբալի եմ ես ու անթիւ մեղքերով լի: Ծածկէ՛ զիս, Տէ՛ր, սուտ գովեստներու եւ երանիներու կոչերէն, որովհետեւ չեն գիտեր մեղքերս եւ չեն ճանչնար խաբէութիւնս. ինքզինքս սուրբ ցոյց կուտամ, սակայն լի եմ աղտեղութեամբ, կը կերպարանուիմ առաքինութեամբ, բայց կ'ապրիմ անառակութեամբ, կը փայլիմ երկիւղածութեամբ, բայց կ'ընթանամ մարդահաճութեամբ, կը ճանչնամ ճշմարտութիւնը եւ սուտ կը խօսիմ, գիտեմ արդարութիւնը եւ անօրէնութիւն կը գործեմ: Ե.Ա

**ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ  
ԾԱՂԿԱԶԱՐԴ**



Մեծ պահոց վերջին Կիրակին կը կոչուի Ծաղկագարդ:

Ծաղկագարդը մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի հանդիսաւոր մուտքն է Երուսաղեմ:

Երբ Յիսուս աւանակին վրայ նստած մուտք կը գործէ Երուսաղեմ, ժողովուրդը խանդավառ ընդունելութիւն ցոյց կու տայ անոր, ձիերով եւ արմաւենիի ճիւղերով կը դիմաւորէ զինք: Անոնք նոյնիսկ իրենց հագուստները կը փռեն գետին, որպէսզի Յիսուս անոնց վրայէն անցնի:

Երբ Յիսուս տաճար կը մտնէ, կը տեսնէ որ շուկայի վերածուած է ան, անմիջապէս կը մաքրէ տաճարը ու բոլորին կը հասկցնէ, որ տաճարը միայն աղօթքի համար կը գործածուի:

Ծաղկագարդի Շաբաթ երեկոյեան, ժամերգութեան ընթացքին կը բացուի ֆառասուն օրեր փակ մնացած խորանը: Ծաղկագարդի օրը Անդաստանի ժամանակ կ'օրհնուին ձիերով եւ հաւատացեալները օրհնուած ձիերով ուստերը կը տանին տուն:

Յատկանշական է Ծաղկագարդի թափօրը, որուն կը մասնակցին բոլոր մանուկներն ու երեխաները զարդարուն ու գունաւոր մոմերով:

**Ի՞նչ է թափօրը:**

Ս. Պատարագի սկիզբը, պատարագիչ եկեղեցականը խորան բարձրանալէ ետք վարագոյրը կը գոցուի. վարագոյրին ետին կը պատրաստէ Ս. Պատարագի սկիզբը՝ նշխարն ու գինին: Վարագոյրը բացուելով՝ պատարագիչը խորանէն վար կ'իջնէ խաչ ու բուրվատ ձեռքին եւ դպիրներ՝ խումբով առջեւէն շարական երգելով ժողովուրդին մէջ կը դառնան: Այս կը կոչուի թափօր:

Թափօրը կը խորհրդանշէ Յիսուս Քրիստոսի աշխարհ գալը եւ ժողովուրդին մէջ շրջիլն ու ֆարոգելը:

Երբ պատարագիչը թափօր կը դառնայ, հաւատացեալները պարզ դիտողներ պէտք չէ մնան: Այսօր ընդհանրացած երեւոյթ դարձած է թափօրի ատեն տեսնել հաւատացեալները, որոնք անտարբերութեամբ կը հետեւին եկեղեցւոյ մէջ դարձող պատարագիչին: Անոնք որոնք մօտ են պատարագիչին, բարեպաշտական մղումէ մեկնած կը մօտենան անոր ձեռքի խաչը համբուրելու, ոմանք ֆաղափաղութիւն կը գգան խաչը համբուրել, ուրիշներ պատարագիչին հանելի թուելու համար կը համբուրեն, ուրիշներ կը գգան, թէ պարտաւոր են համբուրելու, եւ ինչքան գգալի կ'ըլլայ խաչը համբուրելու մեքենական շարժումները: Իսկ անոնք որոնք պատարագիչէն հեռու են, ի՞նչ կ'ընեն: Անոնք ըսելիք չունին:

Պատարագիչը երբ ժողովուրդին մէջ թափօր կը դառնայ, հաւատացեալները պէտք է մեղմ ձայնով ըսեն. **«Յիշեսցի՛ր եւ զմեզ առաջի անմահ գառնին Աստուծոյ», այսինքն՝ «Մեզ ալ յիշէ Աստուծոյ գառին (Քրիստոսի) առջեւ:**